

ՀԱՆՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ղալարիկ գյուղական համայնքի ղեկավարի
(2016 թվականի 2-րդ կիսամյակ)

2016 թվականի դեկտեմբերի 30-ին տեղի է ունեցել Արմավիրի մարզի Ղալարիկ գյուղական համայնքի ընդհանուր ժողով:

Ժողովին ներկա էին 75 բնակիչ բուժամբուլատորիայի, երկաթգծի, դպրոցի տնօրենները, համայնքապետարանի աշխատակազմը, ավագանու անդամներ, մարզպետարանի ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Յ.Մանվելյանը:

Ժողովը նախագահում էր՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ռ.Սահակյանը
Ժողովը քարտուղարում էր՝ աշխատակազմի քարտուղար Ս.Շահբազյանը
Լսեցին Արմավիրի մարզի Ղալարիկ գյուղական համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2016 թվականի երկրորդ կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ժողովն արձանագրում է.

2016թ.-ի երկրորդ կիսամյակի ընթացքում Ղալարիկի համայնքապետարանը բնակիչներից ստացել է 78 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են, համապատասխան լուծումներ համապատասխան ժամանակահատվածներում: Համայնքապետարանը բնակիչներին տվել է 365 տեղեկանք, ստացել 65 պաշտոնական նամակ, որոնք քննարկվել են սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

- 2016թ.-ի երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպվել և անցակացվել է ավագանու ընտրություններ: Համայնքի վարչական տարածքում կատարվել է սաննաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները, փողոցները, բազմահարկ շենքերի բակերը, տարածքային տարածքը, մանկապարտեզի, երաժշտական դպրոցի, համայնքի վարչական տարածքով անցնող Երևան-Գյումրի մայրուղու և երկաթգծի տարածքները: Կատարվել է աղբահանություն շաբաթը մեկ անգամ և տեղափոխվել համապատասխան աղբավայր: Աղբահանությունը կատարվում է համայնքի ֆինանսական միջոցներով:

- Նախագինակոչային տարիքի պատանիները ժամանակին ներկայացել էին Արմավիրի Ջինկոն, գինակոչը գտնվում է ընթացքի մեջ:

- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշտագրման աշխատանքներ:

- Համայնքի բնակչության հետ համատեղ կազմակերպվել է պայքարային մկնանման կրթողների դեմ:

- Համայնքի տարածքում կատարվել է խմելու և ոռոգման ջրի ջրագծի և համայնքի ճանապարհների վերանորոգման աշխատանքներ:

- 2016թ.-ի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի փաստացի եկամուտները կազմել են՝

ա) հողի հարկ - 4566,0 հազար դրամ,

բ) գույքահարկ - 4872,3 հազար դրամ,

գ) տեղական տուրք - 395,6 հազար դրամ,

դ) պաշտոնական դրամաշնորհ - 35808,0 հազար դրամ,

ե) այլ ընթացիկ դրամաշնորհ - 580,7 հազար դրամ

զ) ընթացիկ սուբվենցիա - 311,1 հազար դրամ,

է) համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճար - 14,7 հազար դրամ

ը) համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենք շինությունների օրինական վճարներ - 50,2 հազար դրամ

թ) պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե - 4474,0 հազար դրամ

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական միջոցառումներ և ծրագրեր, համայնքապետարանի աշխատակազմը համայնքի ղեկավարության ղեկավարությամբ աջակցել է ծիրանի, աշնանացան ցորենի և զարնանացան զարու բերքահավաքի աշխատանքներին:

ա) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, տարեկան կանանց, հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին, արցախյան պատերազմի մասնակիցներին, հաշմանդամներին տրվել է դրամական օգնություն 3800,0 հազար դրամ:

բ) աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 1193,2 հազար դրամ,

գ) 3024,9 հազար դրամ ծախսվել է համայնքում նախադրված օրոգակալի կրթող հաստատությունում աշխատանքների պայտշաճ կազմակերպման համար

դ) 3821,9 հազար դրամ ծախսվել է համայնքում արտադարձցակաև դաստիարակության հաստատությունում (Երաժշտական դպրոց) աշխատանքների պատշաճ կազմակերպման համար:

ե) Համայնքում մշակութային միջոցառումների կազմակերպման համար հատկացվել են 400,0 հազար դրամ:

- Մշակույթի տունը գործում է, սակայն շենքը վերանորոգման խիստ կարիք ունի.

- Համայնքը խիստ կարիք ունի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման

- Համայնքի 19 բազմաբնակարանային շենքերի կտուրներն ունեն կապիտալ վերանորոգման խիստ կարիք:

Համայնքի ղեկավար՝

